

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՁԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇ / 12-ի բազա/

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ

2023թ

1. Քլորոպլաստը բուսական բջջի այն հիմնական օրգանոիդն է, որում տեղի է ունենում՝

1/լուսասինթեզը

2/ճարպերի սինթեզը

3/ածխաջրերի ճեղքումը

4/քեմոսինթեզ

2. Ի՞նչ են կոչվում արական և իգական սեռական բջիջները.

1/ սպերմատոգոնիումներ և օվոգոնիումներ

2/ առաջին կարգի սպերմատոցիտներ և օվոցիտներ

3/ երկրորդ կարգի սպերմատոցիտներ և օվոցիտներ

4/ սպերմատոգոնիդներ և ձվաբջիջներ

3. Լիզոսոմները ձևավորվում են՝

1/բջջակորիզում

2/միտոքոնդրիումներում

3/Գոլջիի ապարատում

4/բջջային կենտրոնում

4. Մարդու օրգանիզմում ո՞ր իմունիտետը ձեռք չի բերվում.

1/ որն առաջանում է վարակիչ հիվանդության արդյունքում

2/որն առաջանում է պատվաստման արդյունքում

3/ որը շիճուկաբուժության արդյունք է

4/ որը ժառանգվում է սերնդեսերունդ

5. Մարսողության գործընթացում աղաթթուն.

1/ուռչեցնում է սպիտակուցները

2/բարձրացնում է ֆերմենտների ակտիվությունը

3/ուչնչացնում է ստամոքս ներթափանցած մանրէներին

4/ ճիշտ են բոլոր պատասխանները

6. Բակտերիաների բջիջը չի պարունակում.

1/միտոքոնդրիումներ, ռիբոսոմներ, էնդոպլազմային ցանց, բջջապատ

2/բջջապատ, պլազմիդներ,քրոմոսոմներ, ռիբոսոմներ

3/պլազմային թաղանթ, ռիբոսոմներ, ԴՆԹ, ՌՆԹ

4/ էնդոպլազմային ցանց,Գոլջիի ապարատ,միտոքոնդրիումներ,բջջակորիզ

7. Ի՞նչ է տրանսլյացիան.

1/գենետիկական տեղեկատվության փոխանակում

2/ԴՆԹ-ի սինթեզ

3/ Ի-ՌՆԹ-ի մատրիցայի հիման վրա ռիբոսոմներում սպիտակուցի սինթեզ

4/ԴՆԹ-ի մոլեկուլից գենետիկական տեղեկատվության փոխանցում Ի-ՌՆԹ-ին

8. Ո՞ր պնդումն է ճիշտ մարդու ողնուղեղային ռեֆլեքսների վերաբերյալ.

1/անհատական են

2/առաջանում են կյանքի ընթացքում

3/կարող են ենթարկվել ներքին արգելակման

4/ փոխանցվում են ժառանգաբար

9. Ո՞ր մկանն է մտնում մարդու հենաշարժիչ համակարգի մեջ.

1/միջկողային

2/բուն մաշկի

3/սրտամկանը

4/աղիի պատի

10/Որտե՞ղ են տեղակայված բոլոր զգայարանների ենթակեղևային կենտրոնները.

1/տեսաթմբում

2/ուղեղիկում

3/ենթատեսաթմբում

4/միջին ուղեղում

11. Ինչի՞ց է կազմված մարդու մաշկի արտաքին շերտը.

1/ առաձգական թելերից

2/էպիթելային հյուսվածքից

3/ ճարպային հյուսվածքից

4/շարակցական հյուսվածքից

12. Պլաստիկ և էներգետիկ փոխանակությունները միասին կազմում են բջջի.

1/ անաբոլիզմը

2/ կատաբոլիզմը

3/ մետաբոլիզմը

4/ գլիկոլիզը

13. Սովորաբար ի՞նչ չի պարունակում երկրորդային մեզը

1/ միզանյութ

2/սպիտակուց

3/ միզաթթու

4/ ջուր

14. Ո՞ր նյութի ազդեցության հաշվին է տեղի ունենում շնչառության հումորալ կարգավորումը

1/ թիրոքսինի

2/ հեպարինի

3/ արյան մեջ պարունակվող ածխաթթու գազի

4/հեմոգլոբինի

15. . ԴՆԹ-ի սինթեզն ընթանում է .

1/ ինտերֆազի վերջնական փուլում

2/ինտերֆազի սկզբնական փուլում

3/ինտերֆազի միջին փուլում

4/միտոզի ընթացքում

16. . Մարդու օրգանիզմում որտե՞ղ է արտադրվում լեդին.

1/յարդում

2/ լեդապարկում

3/ տասներկուամսնյա աղիքում

4/կույր աղիում

17. Ո՞ր փուլում է տեղի ունենում հոմոլոգ քրոմոսոմների տարամիտումը բևեռներ.

1/միտոզի անաֆազում

2/միտոզի առաջին բաժանման պրոֆազում

3/մեյոզի առաջին բաժանման անաֆազում

4/միտոզի թելոֆազում

18. Ո՞ր հատկանիշն է բնորոշ մարդու լեյկոցիտներին.

1/բոլորն ունեն կյանքի ամենակարճ տևողությունը

2/ունեն համեմատաբար փոքր չափեր

3/արյան մեջ ամենաշատն են

4/որոշ տարատեսակներ կարող են սինթեզել հակամարմիններ

19. . Ի՞նչ եղանակով է կատարվում գազափոխանակությունը մարդու հյուսվածքներում.

1/դիֆուզիայի

2/պինոցիտոզի

3/ֆագոցիտոզի

4/օսմոսի

20. Ո՞րն է գլիկոգեն ածխաջրի մոնոմերը.

1/ ֆրուկտոզը

2/ գալակտոզը

3/ ռիբոզը

4/ գլյուկոզը

21. Ի՞նչ է կոչվում գենոտիպի փոփոխման հետ չկապված փոփոխականությունը.

1/ մուտացիոն փոփոխականություն

2/ հարաբերակցական փոփոխականություն

3/ մոդիֆիկացիոն փոփոխականություն

4/ համակցական փոփոխականություն

22. Ինչի՞ց է կազմված մարդու կենտրոնական նյարդային համակարգի սպիտակ նյութը.

1/ նյարդային բջիջների մարմիններից

2/ նյարդային բջիջների մարմիններից և դենդրիդներից

3/ միելինապատ դենդրիդներից

4/ միելինապատ աքսոններից

23. Որտե՞ղ են տեղակայված մարդու մաշկային ընկալիչները.

1/ վերնամաշկում

2/ բուն մաշկում

3/ ենթամաշկային բջջանքում

4/ վերնամաշկի ստորին շերտում և ենթամաշկային բջջանքում

24. Ի՞նչն է հանդիսանում էվոլյուցիայի արդյունք.

1/ գոյության կռիվը

2/ օրգանիզմների հարմարվածությունը

3/ ժառանգական փոփոխականությունը

4/ արոմորֆոզը

25. Ո՞ր օրգաններն են համարվում հոմոլոգ.

1/ունեն ծագման նմանություն

2/կատարում են նման ֆունկցիա

3/չունեն կառուցվածքի ընդհանուր պլան

4/ծագումով տարբեր են

26. Ո՞րն է արոմորֆոզի օրինակ.

1/ հովանավորող գունավորումը

2/ միմիկրիան

3/ ողնաշարավոր կենդանիների մոտ ծնոտների առաջացումը

4/ նախազգուշացնող գունավորումը

27. Հատիկավոր էնդոպլազմային ցանցի թաղանթների վրա են գտնվում.

1/ պլաստիդները

2/ ռիբոսոմները

3/ ներատուկները

4/ վակուոլները

28.Ի՞նչն է բնորոշ պայմանական ռեֆլեքսներին.

1/ փոխանցվում են ժառանգաբար

2/ բնորոշ է միայն տվյալ անհատին

3/բնածին են

4/ ժառանգվում են ծնողներից

29. Ո՞ր վիտամինի անբավարարությունն է նպաստում „ցինգա,, հիվանդության զարգացմանը.

1/ B

2/ D

3/ C

4/ A

30. Ո՞րն է երիկամի կառուցվածքային և գործառական միավորը .

1/ միզուկը

2/ նեֆրոնը

3/ միզապարկը

4/ միզածորանը

31. Ո՞ր անոթով չի հոսում երակային արյուն .

1/ դռներակով

2/ վերին սիներակով

3/ թոքային երակով

4/ թոքային զարկերակով

32. Մարդու օրգանիզմում որո՞նք են մաշկի էպիթելի ածանցյալները .

1/ ենթամաշկային բջջանքը

2/ մազերի դիրքը փոխող մկանաթելերը

3/ մազերը և եղունգները

4/ ճարպագեղձերը

33. Ո՞ր հատկանիշն ունի ռեակցիայի նեղ նորմա .

1/ սերմերի զանգվածը

2/ բույսերի բարձրությունը

3/ կովերի կաթնատվությունը

4/ աչքերի գույնը

34. Ի՞նչն է նպաստում ներտեսակային գոյության կովի մեղմացմանը .

1/ անուղղակի հետսաղմնային զարգացումը

2/ ուղղակի հետսաղմնային զարգացումը

3/ տեսակի պատմական զարգացումը

4/ սաղմնային զարգացումը

35. Գեղձերը լինում են.

1/ ներզատական

2/ արտազատական

3/ խառը

4/ բոլոր թվարկածը

36. Որտե՞ղ է գտնվում մարդու շնչառական կենտրոնը.

1/ երկարավուն ուղեղում

2/ թոքամզային խոռոչում

3/ շնչառական մկանում

4/ շնչափողում

37. Մարդու օրգանիզմում ո՞ր տեսակի հյուսվածքի բաղկացուցիչ մաս են կազմում լիմֆոցիտները.

1/ մկանային

2/ նյարդային

3/ էպիթելային

4/ շարակցական

38. Ո՞ր նյութի սինթեզը տեղի չի ունենում մարսողական համակարգի գեղձերի բջիջներում.

1/ պրոթրոմբինի

2/ հեպարինի

3/ լիզոցիմի

4/ ֆիբրինի

39. Ի՞նչ հիվանդություն է զարգանում մարդու օրգանիզմում վահանաձև գեղձի գերզործառույթի

հետևանքով.

1/ բրոնզախտ

- 2/ լորձայտուց
- 3/ բազեդովյան
- 4/ ակրոմեգալիա

40. Ի՞նչ արդյունք է ստացվում հետերոզիգոտ և հոմոզիգոտ ռեցեսիվ առանձնյակների

միահիբրիդ խաչասերման դեպքում.

- 1/ ֆենոտիպային միակերպություն
- 2/ 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 3/ 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 4/ 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի

41. Միտոտիկ բաժանման n° ր փուլում է վերականգնվում կորիզաթաղանթը.

- 1/ անաֆազում
- 2/ մետաֆազում
- 3/ ինտերֆազում
- 4/ թելոֆազում

42. Ո՞րն է էներգիայի հիմնական աղբյուրը բջիջների կիսման ժամանակ.

- 1/ ԴՆԹ-ն
- 2/ ՌՆԹ-ն
- 3/ ԱԵՖ-ը
- 4/ լիպիդները

43. Ո՞ր սաղմնային թերթիկից է առաջանում մարսողական խողովակը.

- 1/ մեզոդերմից
- 2/ էնտոդերմից
- 3/ մեզոդերմից և էնտոդերմից
- 4/ էկտոդերմից

44. Մարդու օրգանիզմում որտե՞ղ է բացվում լեղածորանը.

- 1/ ենթաստամոքսային գեղձի մեջ
- 2/ տասներկուամատնյա աղու մեջ
- 3/ ուղիղ աղու մեջ
- 4/ հաստ աղու մեջ

45. Որտե՞ղ են գտնվում մարդու լսողական ընկալիչները.

- 1/ թմբկաթաղանթի վրա
- 2/ խխունջում
- 3/ միջին ականջում
- 4/ լսողական արտաքին անցուղում

46. Ինչպե՞ս է կոչվում յուրաքանչյուր օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը.

- 1/ գենոմ
- 2/ գենոֆոնդ
- 3/ գենոտիպ
- 4/ ֆենոտիպ

47. Բջջներում կա նուկլեինաթթուների .

- 1/ մեկ տիպ
- 2/ երկու տիպ
- 3/ երեք տիպ
- 4/ չորս տի

48. Ինչպե՞ս են կոչվում այն քրոմոսոմները, որոնցով արուները և էգերը տարբերվում են իրարից.

- 1/ սեռական
- 2/ մարմնական

3/ շղթայակցված

4/ տրամախաչված

49. Ինչի՞ց է կախված օրգանիզմի սեռը.

1/ սեռական բջիջների որակից

2/ ձվաբջջի չափսերից

3/ սերմնաբջիջների քանակից

4/ զիգոտի քրոսոմային հավաքակազմից

50. Ի՞նչ հիվանդություն է զարգանում մանկական հասակում թիրօքսինի
անբավարարության դեպքում.

1/թզուկություն

2/գաճաճություն

3/լորձայտուց

4/բրոնխախտ